
ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑՈՒ ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՅՑ-ԲԱՆԱՎԵՃԻ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ԴԻԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

XVII-XVIII դդ. հայ նշանավոր վաճառական, բանաստեղծ, հանելուկագիր, երաժիշտ ու նկարիչ Ստեփանոս Դաշտեցու թողած մատենագրական հարուստ ժառանգության մեջ մշակութաբանական առանձնահատուկ արժեք ունեն ոչ միայն քրիստոնեությանը վերաբերող դավանաբանական ու ծիսական խնդիրներին նվիրված նրա մի շարք աշխատություններ («Մախաղ փշրանաց», «Խնդիր ուղղութեան» և «Կոչնակ ճմարտութեան»), այլև Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց միաբանության ձեռագրատան թիվ 346 ձեռագրում ամփոփված յոթ «գրույց-բանավեճերը» պարսիկ և այլազգի՝ հիմնականում մահմեդական հոգևորականների, վաճառականների, ինչպես նաև մահմեդականացած առանձին հայերի հետ: Բարեբախտաբար Ստեփանոս Դաշտեցու խնդրո առարկա գրույց-բանավեճերը, ի տարբերություն վերը նշված նրա մյուս աշխատությունների, արդեն հրատարակված են¹, ուստի կարող ենք զբաղվել դրանցում արծարծված խնդիրների վերլուծությամբ: Բանն այն է, որ մինչև օրս, բացի հրատարակողի՝ համառոտ առաջաբաններում դրանց վերաբերյալ տրված ընդհանուր գնահատականներից, վերջիններս, ըստ էության, մասնագիտական վերլուծության չեն ենթարկվել: Մինչդեռ դրանցում քննարկվում են փիլիսոփայական, կրոնական, բարոյագիտական, գեղագիտական ու կենացադաշին զանազան հարցեր, որոնցից շատերը այսօր ևս չեն կորցրել իրենց այժմեականությունն ու կարևորությունը: Ինքնին հասկանալի է, որ մեկ հոդվածում հնարավոր չէ լուսաբանել յոթ գրույց-բանավեճերում արծարծված բոլոր հարցերը, ուստի սույն հոդվածում կփորձենք ներկայացնել հատկապես առաջին գրույց-բանավեճը, որը ամենից ծավալունն է, իսկ քննարկված հարցերով՝ ամենից հարուստը: Ավելին, մյուս գրույց-բանավեճերից մի քանիսում պարզապես հանգամանորեն քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք առաջինում արծարծված են համառոտակի: Վերջապես, այստեղ շոշափվում են նաև ոչ կրոնական, մասամբ և ինքնակենսագրական բնույթի հարցեր, իսկ որ անչափ կարևոր

¹ Տե՛ս Հր. Միրզոյան, Ստեփանոս Դաշտեցու «գրույց-բանավեճերի» պատմամշակութային արժեքը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1995, թիվ 3, նույնի՝ Ստեփանոս Դաշտեցու առաջին «գրույց-բանավեճը», «Բանբեր Երևանի համալսարանի», 1997, թիվ 3, նույնի՝ Ստեփանոս Դաշտեցու անտիպ «գրույց-բանավեճերը», «Բանբեր Երևանի համալսարանի», 2009, թիվ 3: Այսուհետև այս հրապարակումներից մեջբերումներ կատարելիս կրկնություններից խուսափելու նպատակով տողատակում կնշենք միայն ԲԵՀ, համապատասխան թվականը, համարը և էջը:

է, այստեղ Ղաշտեցին ներկայացնում է նաև բանավիճելու արվեստի սեփական ինչ-ինչ ընթրումներ ու սկզբունքներ:

Ստեփանոս Ղաշտեցին (ծնվ. 1653 թ.) սերում էր Շահաբասի՝ 1604 թ. հայտնի բռնագաղթի հետևանքով Հայաստանի պատմական Գողթն գավառի Ղաշտ գյուղից Պարսկաստան (Նոր Ջուղա) տեղափոխված տոհմիկ գերդաստանից և ի հիշատակ նախնիների ծննդավայր Ղաշտ գյուղի՝ կոչվել է Ղաշտեցի: Նա սկզբնապես ընտրել է հոգևորականի ուղին, սակայն մեր ժողովրդի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի անբարենպաստ պայմանների հարկադրանքով սկսել է զբաղվել առևտրով: Դժգոհելով տիրող հասարակական պայմաններից և թափառաշրջիկ վաճառականի իր կենսաձևից՝ Ղաշտեցին սրտի ցավով գրում է, որ հայերը, չունենալով «գիանգիստ կամ գտեղի ուր դիցեն զգլուխս իւրեանց և այս ի կողմանէ գերչաց և ընդ իշխանութեամբ գրաւողացն մերոց, որոց աղագաւ ոչ կարելով ի գործ արկանել զգինոորութիւն, զնօտարութիւն կամ զայլ իմն ծառայութիւն ի դրունս արքունեաց. նաև ոչ տալով նոցա գդադար կեղեքելով և յափշտակելով զնոսա. կամելով ևս խանգարել զարիեստս ամենայնս խորշելով ի մէնջ, որոյ աղագաւ անճարակըս եղեալք յոչ ուստեքէ գտանել զհնարս կեցութեան, հետևեցան արիեստի վաճառականութեան, և այսպէս ցիր և ցան եղեալ՝ շրջիմք ընդ երեսօք բուլրակի գնդի աշխարհիս: Ուստի յամենայն ուրեք և յամենայն տեղիս երևեալ գտանեմք սակս արիեստի վաճառականութեան մերոյ, թէ ի մէջ քրիստոնէից և թէ ի մէջ այլադաւանից»²: Ճիշտ է, Ստեփանոս Ղաշտեցու կյանքը, գործունեությունը ու մատենագրական բավական հարուստ ժառանգությունը առայժմ չեն արժանացել մենագրական հանգամանալից ուսումնասիրության, բայց և այնպես զգալի գործ է արված այդ ուղղությամբ³: Ղաշտեցին ունեցել է բազմակողմանի ձիրք ու շնորհք. նա հրապարակախոս էր, բանաստեղծ, հմուտ երաժիշտ, օժտված էր գեղանկարչական բացառիկ ընդունակություններով, գիտական-փիլիսոփայական փայլուն կարողություններով, որոնք լավագույնս դրսևորվել են նրա բանավեճային աշխատություններում և հատկապես խնդրո առարկա զրույց-բանավեճում: Լինելով կաթոլիկամետ, Ղաշտեցին բանավիճել է մի կողմից հայ առաքելական եկեղեցու սկզբունքների պաշտպան հայազգի հոգևորականների, իսկ մյուս կողմից՝ մահմեդական վաճառականների, շեյխերի, փիլիսոփաների, բանաստեղծների, ինչպես նաև մահմեդականացած հայերի և բազում այլ մարդկանց հետ: Հ. Միրզոյանի կարծիքով, այդօրինակ բանավեճերի համար նպաստավոր պայմաններ են ստեղծել

² Ս. Ղաշտեցի, Մախաղ փշրանաց, Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 9689, էջ 4:

³ Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2, Եր., 1959, Հ. Սահակյան, Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (16-17-րդ դարեր), Եր., 1975, Ա. Մնացականյան, Հայ միջնադարյան հանելուկներ (5-18-րդ դդ.), Եր., 1980, Ս. Սիմոնեան, Նորահայտ տաղասաց մը՝ Ստեփանոս Ղաշտեցի, Պեյրուք, 1981, Հ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983 և այլն:

հատկապես «առևտրական տներն ու քարվանսարաները, որոնք եղել են ոչ միայն տնտեսական գործարքներ կնքելու, հոգնեցուցիչ ճանապարհորդություններից հետո կարճատև դադար առնելու վայրեր, այլև՝ գիտամշակութային յուրատեսակ օջախներ, որտեղ հանդիպելով աշխարհի չորս կողմերից եկած տարբեր կրոնների, գիտելիքների, լեզուների, մշակույթների, բարքերի ու սովորույթների տեր մարդիկ, հաճախ կազմակերպել են գրական-երաժշտական երեկույթներ ու մրցույթներ, գիտական, կրոնական, փիլիսոփայական, բարոյագիտական ու գեղագիտական զանազան հարցերի շուրջ բանավեճեր, քննարկել ժամանակի մարդկային միտքը հուզող խնդիրներ, տվել կամ ստացել պատասխաններ, որոնք այլ պայմաններում ու այլ հանգամանքերում նույնիսկ անհնար էր երևակայել»⁴:

Ուսումնասիրելով Ղաշտեցու առաջին գրույց-բանավեճը, որը վերնագրված է «Առարկութիւնք ի պարսից ոմանց եւ պատասխանատրութիւնք ի մէնջ ի պատահիլն մեր ի բազում տեղիս, մանաւանդ ի թիվս փրկչին հազար եօթն հարիւր եւ եօթին, յօրժամ էաք ի Բանդար Սուրաթ անուանեալ քաղաքում ի հնդիկս ընդ ոմանս փիլիսոփայս անուանիս, զորոց անուանքն երկարութիւն է ստորագրիլ», կարելի է նկատել, որ ընդդիմախոսները հենց սկզբից փորձել են ցույց տալ, որ իբր մահմեդականությունն ավելի բարձր կրոն է, քան քրիստոնեությունը, որովհետև հանդես գալով քրիստոնեությունից հետո՝ ակնհայտ առավելություններ ունի նրա համեմատությամբ: Ավելին, նույնիսկ զարմանք են հայտնել, թե ինչու Ղաշտեցու նման «արք մակացուք և առ բազում բանս հմուտք և կատարելաք զհարդ ոչ հնազանդին օրինացն մեծի մարգարէին մերոյ»⁵, մանավանդ որ, իբր, Ավետարանում Քրիստոսն ինքն է խոսել մարգարեի գալստյան մասին: Համբերատարությամբ լսելով ընդդիմախոսներին՝ Ղաշտեցին «մեղմաբար» պատասխանում է, որ ինքը ևս զարմանում է, թե ինչպես կարող էին քրիստոնյաները չհասկանալ իրենց շահը և ընդունել մահմեդականություն, օգտվել, ինչպես նրանք են ասում, մարգարեի սահմանած օրենքներով թույլատրվող բարիքներից, «եթէ Քրիստոսն խօսեցեալ իցէ զդմանէ և կամ զուշակեալ զգալստենէ դորին և զանուանէ»⁶: Քաջ հասկանալով, որ կարող է տանուլ տալ բանավեճը, Ղաշտեցին որոշում է սահմանել երկխոսության որոշակի սկզբունքներ և ղեկավարվել դրանցով: Ուստի մահմեդականության առավելության օգտին բերված մի շարք փաստարկներ լսելուց հետո Ղաշտեցին ընդդիմախոսներին առաջարկում է «...կամ ոչ առարկել ընդդէմ մեր ձեզ ազնուամեծաց երջանկացդ զվիճաբանութիւնս հաւատոյ և կամ մի՛ երբէք ցասնուլ կամ դաւել զմեզ, զոր ոչ երբէք մեղաք ձեզ: Քանզի դիտաւորութիւն երկոցունցս ոչ այլ ինչ է, եթէ ոչ իմանալ զնորագոյնս ինչ, վասն զի ոչ դուք կարէք թողուլ զբոլոր սրտէ ընդրեցեալ և ի նմա սելեռեալ հաւատն ձեր, և ոչ ես կարեմ տանել և բոլորովիմբ հետևիլ

⁴ ԲԵՀ, 1995, թիվ 3, էջ 106-107:

⁵ ԲԵՀ, 1997, թիվ 3, էջ 90:

⁶ Նույն տեղում:

հաւատին ձերոյ, ի բաց մերկանալով ի սիրոյն Քրիստոսի փրկչին մերոյ»⁷: Ընդունելով Ղաշտեցու այս միանգամայն իրավացի առաջարկությունը՝ գրուցընկերները պատասխանում են. «Մեք ևս լաւ գիտեմք զայդցանէ, զի ոչ մենք զքեզ առ մեզ դարձուցանել կարեմք կամաւ և ոչ դու զմեզ ի յօրինացն մերոց ամենևին, սակայն բանականին է գործ միշտ արծարծել զգիտութիւնն, վասն որոյ դիտաւորութիւն մեր ոչ է զոմանս դաւելոյ սակս, այլ միայն իմաստասիրելոյ յաղագս է դիտաւորութիւն մեր: Ուրեմն կարեմք բացասել յստորասութեանց միմեանց, նա՛ և ոչ է կանոն իմաստասիրաց կամ փիլիսոփայից ցասնուլ իրերաց և կամ պահել զոխս ի սակս վիճաբանութեանցն, որ հայիցի միշտ ի յիմաստասիրելն»⁸: Տվյալ դեպքում ընդդիմախոսների կողմից ցուցաբերված հանդուրժողականությունը, համբերատարությունն ու փոխըմբռնումը լավագոյն ապացույցն են այն բանի, որ նրանց հետաքրքրում էր ոչ թե մեկը մյուսին դավանափոխելը կամ մյուսի դավանանքը մերժելը, որքան փոխադարձ ճանաչողությունը, տարբեր կրոնների միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները բացահայտելը:

Զրուցընկերների հետ գալով նախնական համաձայնության՝ Ղաշտեցին փորձում է նրանց հետ նախապէս համաձայնություն ձեռք բերել մեկ այլ հարցում ևս: Ըստ այդմ, մատնանշելով բնության մի շարք երևույթներ, դրանց հիման վրա եզրակացնում է, որ «իմանալիքն պատուականագոյնք և լաթիֆիք են, [քան] զգալիքս, անմարմինքն քան զմարմնականքս, վերնայինքն քան զստորնայինքս»⁹: Չհասկանալով Ղաշտեցու հարցադրման հեռահար նպատակը՝ բանավիճողները միաձայն պատասխանում են, որ այնքանով է ճշմարիտ ու հավաստի այդ դրույթը, որ «եթէ ոք ապուսումն տացէ ի յասացելոցդ ոչ է հաւասարելի ընդ բանական կենդանեաց զայնպիսին»¹⁰: Իր դրույթն ամրապնդելու նպատակով Ղաշտեցին միանշանակ եզրակացնում է, որ ուրեմն «իմանալիք են պատուականագոյնք և լաթիֆք, քան զջոմանիքն, այսինքն զգալիսն, հետև[ա]յէս և ռուհանուն հետևողքն են լաթիֆք և բանականք, քան զհետևողսն ջոմանոցն և զգալեոցսն հարկաւորայէս»¹¹: Նոր միայն զգալով Ղաշտեցու հարցադրման իմաստն ու նպատակը՝ փորձում են խուսափել պատասխանից՝ զբաղվելով հարցի նենգափոխմամբ. «Յայնժամ,- գրում է Ղաշտեցին,- հանձարեղքն ի խորագիտութիւնս իմացան զնկատմանէ ձեռնարկութեանցն մերոց, սկսան առժամայն թողուլ զպատասխանատրութենէ, առարկեալ ձեռնարկութեանցն մերոց, աճապարելով թերևս այլ իմն զբան ի մէջ արկանել և ասել, թէ Ավետարանն ձեր եթէ ոչ էիք փոփոխեալ, զոր վասն օրինադրին մերոյ ունէր զգուշակումն յանուանէ, յայնժամ տայաք յամօթի առնել զձեզ, այլ բարձիք զբոլորն զորս մարգարէին մերոյ սակս ունէր զգուշա-

⁷ Նույն տեղում, էջ 91:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 92:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

կումն, զինչ օգուտ ուրեմն ընդ վայր դեզերիլ առ ի դատարկածեռն վաստակս»¹²: Իբրև բանավեճի կանոնադիր ու կանոններով ղեկավարվող մտածող՝ Ղաշտեցին հակառակորդներին հիշեցնում է, որ «փիլիսոփայից և իմաստասիրաց ոչ է կանոն նախքան զտալն ենթադատութեան և եզրակացութեան առաջարկութեանց ձեռնարկողացն աճապարիլ առ այլ իմն ձեռնարկութիւն»¹³: Այնուհետև փորձելով պատասխանել նախ իր առաջադրած հարցին և նոր անցնել այլ հարցերի քննարկման՝ Ղաշտեցին խոստանում է իր ուժերի ներածին չափով պատասխանել ցանկացած հարցի, միայն թէ պահպանվեն բանավեճի կարգն ու կանոնները: Նորից խնդրելով պատասխանել իր առաջադրած հարցին՝ Ղաշտեցին զարգացնում է հարցադրումը՝ ասելով, որ համաձայն իր դրույթի՝ «պատուականագոյնք են իմանալիքն քան [զ]զգալիսն և հոգևորքն քան զմարմնաւորսն և հետևողք հոգևորաց և իմանալեացն քան զմարմնաւորսն և զզգալիսն, հետևապէս և պատուականագոյն է օրինադիր հոգևորաց և իմանալեաց և վերնայնոցն սահմանադրութեանց, քան զօրինադրողն հետևման զգալեաց ապականացուաց և աղցաւորացս»¹⁴: Այնուհետև, Ղաշտեցին, հիմք ընդունելով իր այն դրույթը, որ բանականն ավելի կարևոր ու բարձր է, քան զգայականը, ընդդիմախոսների բերած բոլոր օրինակները, որոնցով նրանք փորձել են ապացուցել քրիստոնեության համեմատությամբ մահմեդականության առավելությունը, եզրակացնում է, որ դրանք բոլորը «են իրք մարմնաւորք և թերևս զգայականացն բաղձալիք և ախորժելիք և ոչ բանականացն ամենևին»¹⁵: Իսկ բանականությունը Աստված տվել է միայն մարդուն, որպեսզի «կարիցէ մարդ ի ձեռն բանականութեանն ընդ հնազանդութեամբ իւրով դնել զզգայականութիւնն և զսպեալ սանձէսցէ զնա՛, զի մի ձկտեսցի նայ ախորժակս և ի հեշտութիւնս բնութեանն զգայականին»¹⁶: Բանն այն է, ասում է Ղաշտեցին, որ ցանկացած էակ, եթե «ոչ հնազանդեցուցանէ [զ]զգայական զօրութիւն իւր ընդ հնազանդութեամբ բանականին, ոչ կարենք իսկապէս անուանել զնա՛ մարդ [բանական] և կամ տալ նմա՛ զսահման մարդոյն թէ է մարդ բանական»¹⁷: Այս ամենի հիման վրա Ղաշտեցին եզրակացնում է, որ «աւետարանական վարդապետութիւնն Քրիստոսի երևի կատարելագոյն և պատուականագոյն գոլ քան զամենայն օրինադրութիւնս և զպատգամաւորութիւնս, թէ Մօսէսի և թէ այլոց մարգարէիցն թարց երկբայութեանց, վասն զի նոքայ ամենեքեանն ու[ս]ուցանեն զմարմնաւորն՝ զզգալին և զապականաց[ի]ւն, մանաւանդ թէ զկրթումն ի հեշտութիւնն և ի յախորժելիս զգայականութեանն, իսկ սա՛ ուսուցանէ զվերնային զհոգևորն և զիմանալին, որք են պատուականագոյնք յարամնայք մշտնջենականք և [ան]ապականելիք,

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 92-93:

¹⁵ Նույն տեղում, էջ 93:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

վասն զի հրամայէ սա ամենայն մարդոյ ուրանալ զստորնայնոցն, մանաւանդ ի չորեցունց մանաւանդականաց տռփանաց մարդոյն»¹⁸: Ըստ Ղաշտեցու՝ մարդու համար տռփանքի առավել սիրելի առարկաներն են՝

1. իր իսկ մարմինը, «վասն զի ոչ ոք կենդանի սիրէ իմն իր առավել, քան զկենդանական զօրութիւն իւր, քան զինքն և զլինելութիւն իւր հարկաւորապէս»¹⁹:

2. «Երկրորդաբար սիրելիք մարդոյն են կերակուրք և ըմպելիք, զգեստք և արկանելիք»: Իսկ թե ինչից է երևում, որ դրանք մարդու համար իսկապես այդքան կարևոր են, Ղաշտեցին գրական-գեղարվեստական շնչով ու փիլիսոփայական ընդհանրացմամբ տալիս է մարդկային ցեղի առօրյա գործունեության լակոնիկ, բայց և խիստ ընդգրկուն բնութագիրը. «Վասն զի ամենայն մարդ ջանայ ունիլ զկերակուրս և զըմպելիս բազմադիմիս և հոգալ զորովայնն առ ի պահպանութիւն անհատութեանն իւրոյ, ուստի և տեսանին ամենայն մարդիք աշխատիլ, նեղիլ, չարչարիլ, գողանալ, յափշտակել, սպանանել և բազմիցս սպանանիլ և մահանալ և հոլովիցս ի դուռն սատակման ընթանալ սակս լցուցանելոյ զորովայնս մեծաւ տենչանօք, ևս և ցանկան ունիլ [զ]զգեստս շքեղս՝ ծիրանիս և ընդելուզեալս ոսկէթելս և պսպղունս, սքանչատեսիլս և այլն»²⁰:

3. Երրորդ տենչանքը մյուս սեռի զուգակից ունենալն է. «այսինքն՝ զկանայս և զուգաւորութիւնս առ միմեանս, վասն զի ամենայն բարութիւնք երկրայնոցս համեմատելով առ այս հեշտութիւն երկին աղօտագոյնք, գոնեայ իբրև զճրագ իմն հանդէպ արեգական»²¹:

4. Չորրորդը, ըստ Ղաշտեցու, այս տենչանքները բավարարելու համար հարստության տենչն է, որի նպատակով ի՛նչ վտանգների ասես որ չեն դիմում մարդիկ: Ու որպէս վաճառական և վաճառականության կյանքին ու գործունեությանը քաջածանոթ անձնավորություն՝ տալիս է հատկապէս վաճառականի, հասկանալի է՝ առաջին հերթին հայ վաճառականի՝ վտանգաշատ կյանքի փայլուն նկարագրությունը: Հարկ ենք համարում բերել այդ հատվածը ամբողջությամբ. «Չորրորդ սիրելիք և ցանկալիք մարդոյն՝ ոսկին, արծաթն և մամոնայք աշխարհիս, վասն զի տեսանին, թէ բազումք ի մարդկանէ կորեան սակս ցանկութեանց արծաթից և գանձուց, ընչից և ստացուածոց ի ծովս և ի ցամաքս լինելով հանապազ մեծի վշտաց և տրտմութեանց՝ բազմիցս ի յերկուղէ ըմբռնեալք, ի տարակուսանաց տատանեալք, ի յահէ գողաց սարսեցեալք և ի յաւազակաց խոցեցեալք, ի տանց և ի ընտանեաց մերկացեալք, բազումք դնելով զանձինս,

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում, էջ 94: Ի դեպ՝ Ղաշտեցու այս միտքը ուղղակիորեն հիշեցնում է «Համառօտիւք բան խրատու» երկում Գրիգոր Նարեկացու համանման համեմատությունը: Իսկ որ Ղաշտեցին քաջածանոթ էր Նարեկացու մատենագրական ժառանգությանը, վեր է կասկածից: Բավական է ասել, որ իր «Մախաղ փշրանաց» աշխատության մեջ մեջբերում է Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ստեղծագործությունից բազմաթիվ հատվածներ:

զկեանս և զհասակս իւրեանց ի վերայ ցանկութեան մամոնային: Երբեմն ի ծովս և ի յալէկոծութեանն բռնութենէ յատակս ծովու և կերակուր ձկանց ստորադրեալք, երբեմն ի սօթոյ և ի խորշակէ պակասեալք և երբեմն ի սառնամանեացն շնչմանց քարացեալք: Եւ այսոքիկ և առաւել քան զսոսա՛ ցաւք, ոչ այլ ինչ աղագաւ է տեսանել, քան թէ ժողովելն զգանձս և կամ զցանկութենէ արծաթոյն, սակս այլոց մարմնականաց ցանկութեանց, զորոց և Աւետարանն Քրիստոսի ուսուցանէ՝ ի բաց մերկանալ ամենևին զայսցանէ և այլոց հեշտութեանց ստորնայնոցս և փախչիլ ի յասացելոց ցանկութեանց և տռփանացն»²²: Այնուհետև մեկ առ մեկ ցույց տալով, թէ դրանցից յուրաքանչյուրի մասին ինչ է ասված Նոր կտակարանի Ավետարանների գլուխներում և, ընդհակառակը, ինչ՝ Ղուրանում, Ղաշտեցին շարունակում է. «Եւ իբրև լռումն եղև երկոցուն կողմանց զբաւական ժամս, յայնժամ պատասխանեալ ասաց ոմն ի բազմելոցն, թէ Ղու զոր ինչ և ի ձերոյ կողմանէն ունիս զբան ինչ մեծաւ ճեպով կամիս ձեռնարկել զնոյն և ամենևին ոչ կամիս պատասխանել ձեռնարկութեանցն մերոց և ոչ մի, վասն զի մնա տակաւին առաջին խնդիրն մեր, զոր ի ձեռն ապացուցութեանն բացայայտեցաք, թէ ի գալ օրինադիրն մերոյ, այսինքն մարգարէին մեծի պարտ իսկ էր դատարկանալ օրինադրութեանց Աւետարանին, որպէս և Աւետարանն ետ բառնալ զզօրութիւն մօտեսական օրինացն: Արդ զինչ ասէք դուք առ այսպիսի ակներև ճմարտութեանս: Եթէ դու իրաւամբ բանի պատասխանեսցես առարկութեանս այսմիկ, մեք ևս պատասխանեսցուք և՛ քոյոց ձեռնարկութեանցն կարի յօժարութեամբ»²³: Լսելով այդ ամենը՝ Ղաշտեցին պատասխանում է, որ միայն դուք եք Ավետարանի ստեղծվելուց հետո Մովսէսի օրենքները համարում հնացած: Իրականում հնացած համարվեցին միայն այն օրենքները, որոնք «հայէին ի յիրս մարմնաւորս», իսկ մյուսները, «որք հայէին առ հոգևոր կեցութիւն և մշտնջենապէս օգտութիւն մարդոյն», չեն հնացել և ուժի մեջ են նաև ներկայումս: Իր միտքը հաստատելու համար բերում է հետաքրքիր օրինակ աշխարհիկ կյանքից՝ ասելով, որ երբ նախորդ թագավորի փոխարեն գահ է բարձրանում նորը, բնավ պարտադիր չէ, որ փոփոխի այն օրենքները, որոնք սահմանված են «սակս մշտնջենապէս պահպանութեան բնակչաց երկրին»²⁴: Նոր թագավորը, ասում է Ղաշտեցին, «կարէ թերևս փոփոխել զոմանս արարողութիւնս, այսինքն՝ տալ տպել զանունն իւր ի վերայ դրամոցն և դահեկանացն, մեծացուցանել կամ փոքրացուցանել զչափս և զկշիռս, զզգեստս և այլ սոյնպիսի իրս, որք ոչ ընդդիմանան կամ վնասեն շահաւետութեամբ եղելոց սահմանադրութեանց նախկնոյ թագաւորին, թերևս տալ և ծանուցանելոյ զինքն աղագաւ բովանդակ բնակչացն առ ի ճանաչել, թէ առաջին թագաւորն մեռաւ և երկրորդն եկաց»²⁵: Այսպես էլ, Ղաշտեցու

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, էջ 96:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում:

կարծիքով, երկնային ծայրագույն թագավորը Մովսեսի, Քրիստոսի և մյուս մարգարեների միջոցով ինչ-որ սահմանել է «ի կեցութիւնն մշտնջենաւոր յաւիտենին», ոչ ոք չի կարող «փոփոխել և կամ ասել, թէ այն հին հրաման է աստուծոյ և է խոտելի կամ այս նորն է և է ընդունելի»²⁶: Այդ է պատճառը, որ մահմեդականները ընդունում ու հարգում են Հին կտակարանը, որովհետև նրանից վերցրել են բազմաթիվ ծեսեր և արարողություններ, թեև դրանք բոլորը «հային միայն ի զգալի մարմինն մարդոյն, որք են առօրեայք և ապականելիք»²⁷:

Ինչպես տեսնում ենք, առևտրականի գործի բերումով աշխարհը չափչփած Ստեփանոս Ղաշտեցին, արևելքի ու արևմուտքի շատ երկրներում ականատես լինելով միապետների գահընկեցության, գահակալության և այդ ամենի հետևանքով հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին, այդ ամենից կատարում է պատմափիլիսոփայական կարևոր հետևություն. միապետների հերթափոխությունից փոխվում է ոչ թե կյանքի բուն ընթացքը, այլ միայն այդ կյանքի արտաքին, երևութական առանձին մանրամասները: Իսկ որ շատ կարևոր է, հայ փիլիսոփան երկրային կյանքի օրինաչափությունների հիման վրա ու դրանց օրինակով փորձում է բացատրել նաև կրոնական ու աստվածաբանական հիմնախնդիրները:

Լսելով ընդդիմախոսների տված բացատրությունները՝ Ղաշտեցին մի շարք հարցապնդումներով հանգում է այն եզրակացության, որ մինչև իր կրոնական ուսմունքը շարադրելը մարգարեն պետք է որ, ըստ նրանց ասածի, ղեկավարված լիներ ոչ թե Հին, այլ Նոր կտակարանով, այլապես հակադրված կլիներ Աստծո հրամանին: Այս հարցադրմամբ ընկնելով նեղ դրության մեջ՝ ընդդիմախոսներից «մեծ ոմն փիլիսոփայիցն» պատասխանում է, որ իրենք այդ մասին ունեն երկու կարծիք. ոմանք ասում են, որ մարգարեն օգտվում էր Մովսեսի օրենքներից, իսկ մյուսները գտնում են, որ ղեկավարվում էր Քրիստոսի օրենքներով: Ղա հաստատվում է այն բանով, որ նախ՝ Հին կտակարանը հնացել էր, և երկրորդ՝ մարգարեն լավատեղյակ է Քրիստոսի վարդապետությանը և հաճախ է խոսում նրա մասին, մանավանդ որ Քրիստոսը գուշակել է մարգարեի գալուստը և այդ մասին հայտնել է Ավետարանում, թեև այժմ այն չի պահպանվել, որովհետև քրիստոնյաները փոփոխել են Ավետարանում եղած այդօրինակ տեղեկությունները: Լսելով այս փաստարկները՝ Ղաշտեցին պատասխանում է, որ «այդպիսի կարծիք, մանաւանդ թէ բանք և գրուցատրութիւնք, եթէ անկիրթ ոմն ասիցէր, ո՛չ է մեզ զարմանալի այնքան, սակայն ի քումմէ խոհեմութենէդ յոյժ հիանալի է, մանաւանդ թէ այդպիսիք բանք և կամ կարծիք վասն փէյղամբարութեան մարգարէին ձերոյ»²⁸, բերում է մեծամեծ վնասներ և առաջին հերթին վնասում է հենց մարգարեի հեղինակությանը: Չէ՞ որ մարգարե-

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում, էջ 97:

ների մեծությունը հենց այն է, որ նրանք տեսնում են անցյալը և կռահում ապագան: Ուրեմն, եթե այդպես է, ինչպես դուք եք կարծում, ապա ինչո՞ւ մարգարեն չգուշակեց այդ բանը և քայլեր չձեռնարկեց դա կանխելու համար: Եվ մի՞թե հնարավոր է «տալ այլայլել զբանս ինչ ի այնքան ազնեայցն լեզուաց, այսինքն՝ ի յունաց և ի լատինացոց, սպանիացոց և ֆրանչիզաց, ջերմանացոց և ըռուսաց, շուէդացոց, դինամարզաց, հայոց և եթէօպացոց, վրաց և հօլանդացոց, ինկլիզաց և ասորոց և բոլոր ազգացն քրիստոնէից, զորոց և երկարանանք ի թուելն, զոր և ոչ ոք խելագար կարէ իշխել, դնել ի գագադան և հաւատալ այսպիսոյ համբաւոյ»²⁹: Տրամաբանական այսպիսի փաստարկներով հակառակորդներին դնելով անելանելի վիճակի մեջ՝ Ղաշտեցին զարմանք է հայտնում, թե «գիարդ ի յստիպիլն ձեր և ի բռնադատիլն ի ճշմարտութենէ դիմեք առ այդպիսիք ունայնաբանութիւնք և կարծիք, որք լիք են դատարկաբանութեամբք: Տակաւին սքանչանամք, թէ յումնէ լուսք դուք զայդ առասպելութիւն և կամ ո՞վ եբեր ի լսելիսն ձեր զայդ համբաւ նոր լուր»³⁰: Ավելին, շարունակում է Ղաշտեցին, եթե ասեք, որ այդ մասին գրված է Ղուրանում, ապա այդ դեպքում կարող ենք հարցնել, թե ինչո՞ւ մարգարեն չգուշակեց Ավետարանում կատարվելիք հնարավոր փոփոխությունը և դա կանխելու համար ինչո՞ւ նախապես չընտրեց թեկուզ երկու տարբեր լեզուներով Ավետարաններ և «առ ի հաստատութիւն իսկական Աւետարանացն այնոցիկ տալ թերևս ստորագրել ներկայ եղելոց և ժամանակակից պատրիարզաց, եպիսկոպոսաց և վարդապետացն նոցունց լեզուաց, որք անպակասք գտանէին յամենայն ուրէք և յամենայն տեղիս, որպէս և արդէնիս է տեսանել, մանաւանդ թէ ոչ պակասեցան երբէք ի վարդապետացն քրիստոնէից ի սպասու մեծի ինքնակալին, որպէս և յաճախօրէն պատմի և ի գիրս պատգամացն իւրոց, որպէս և յայտ է մանաւանդապէս և ձեզ նորին հետևողացդ»³¹:

Ասվածից հետևում է, եզրակացնում է Ղաշտեցին, որ զրուցընկերները կամ պետք է ընդունեն, որ այդ «համբաւ է սուտ և յունայնաբանութիւն», և կամ խոստովանեն, որ մարգարեն «ոչ գիտաց գիրս ապագայս և զհետևեալս զկնի իւրեան»³², որը բոլորովին ցանկալի չէ նրանց համար, որովհետև դրանով հաստատած կլինեն մարգարեի տկարությունը:

Չկարողանալով տալ տրամաբանական համոզիչ պատասխան՝ «չէյիս անուանեալ ոմն ի նոցանէ» փորձում է ծաղր ու ծանակի ենթարկել Ղաշտեցուն և հանձին նրա՝ ընդհանրապես քրիստոնյաներին, ուստի պարսկերեն ինչ-որ միտք է ասում, որի համար բոլորը երկար ժամանակ բարձրաձայն ծիծաղում են Ղաշտեցու վրա, որը համբերատարությամբ տանելով այդ ամենը, հակառակորդներին անհարմար վիճակից դուրս բերելու համար ասում է, որ թեև «սակս իրողութեանդ յայդմիկ և զդիտաւորութենէ բանիդ այդորիկ պահանջէ բանն զժամանակ ինչ, ուստի ոչ է

²⁹ Նույն տեղում, էջ 98:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում:

հնար, զի համառօտ բանիւք կարիցէք վեր ընդունել զօգտութիւն ինչ ի լսելիս ձեր, իսկ եթէ կամիցի ազնուականութիւն ձեր վերստին տեղեկանալ զդիտաւորութենէ քրիստոնէիցս, զոր ինչ և գիտենքն փոքր ի շատէ յօժարութեամբ բացայայտելոց են ձերին ազնուականութեանն»³³: Բանն այն է, ըստ Ղաշտեցու, որ յուրաքանչյուր կենդանի օժտված է զգայարաններով, որոնցով զգում է միայն «զմարմնաւորս և ոչ զհմանալիսն», իսկ մարդը, բացի զգայարաններից, ունի նաև բանականություն, որով ճանաչում է «հոգևորս և անմարմինս», ուստի դրանով պետք է տեսնի ու ճանաչի «զերկնայինս և զաստուածայինս»: Քանի որ այսպես է, հավելում է Ղաշտեցին, ուստի երբ «կամիցիմք տալ զենթադատութիւն զգալի իրաց յայնժամն տամք զիւրաքանչիւրքն ի ձեռն հինգ զգայականութեանցն մարմնոց մերոց, այսինքն, զորակութիւնս գունոցն աչաց, թէ ո՞րն է սպիտակն և ո՞րն թուխն, զերզս պարուց և լալիւն սոցո՞՞ականջաց, զքաղցր[ն] և դառն՞ ի ճաշակելեաց զանուշահոտութիւն[ն] և զժահահոտութիւնն՞ հոտոտելեաց, ըզծանրութիւն[ն] և զթեթևութիւնն, զկոշտն ու զկակուղն, ջերմն և ցուր[ն]տն՞ շոշափելեաց և կամ հասարակ զգայութեանց: Բայց իբրև զաստուածայնոցն իրաց արկանել զբուռն և կամ ի գերբնականացն իրաց հասանել զկայանան, յայնժամն ոչ է պարզ զգալեօք աչօք և մարմնաւորօք գործեօք նկատել զայնպիսիսն, վասն զի անհնար է զգալւոյն շօշափել և ըմբռնել զհմանալին և կամ մարմնոյն աչացն ձկտիլ և հասանիլ անմարմնոց գոյացութեանցն: Նմանապես և դուք յորժամ լսէքն, թէ նսարայքն, այսինքն՝ քրիստոնեայքն ասեն, թէ Քրիստոսն է որդի Աստծոյ, յայնժամն տաք ի ձեռն զգալի աչաց հայեցողութեան ձերոյ, իսկ որովիտեսն մարմնաւոր աչք ոչ կարէ շօշափել զաստուածային խորհուրդս, վասն որոյ և մնա՞ ի ձէնջ անհասանելի և լինի տակաւին ի տեղի ծաղերց, որպէս և անցելումդ տեսաք աչօք մերովք և բաւականացի»³⁴:

Արդ, ավարտելով մեր ասելիքը Ղաշտեցու առաջին զրույց-բանավեճի մասին, կարծում ենք, վերը շարադրվածը բավական է համոզվելու, որ այն իսկապես ունի ոչ միայն մշակութաբանական մեծ արժեք ու կարևորություն, այլև այնտեղ շոշափվում են նաև հասարակական-քաղաքական, տնտեսական, պատմափիլիսոփայական ու տրամաբանական մի շարք հիմնախնդիրներ, որոնք այսօր ևս չեն կորցրել իրենց իմացական արժեքն ու նշանակությունը:

ДИАНА АЙРАПЕТЯН – *Культурологическая ценность первой “беседы-дискуссии” Степаноса Даштеци.* – Старинные рукописи – непреходящее богатство армянской культуры, важный первоисточник для изучения её истории. Среди них выделяются семь “бесед-дискуссий” философа, поэта, публициста и купца XVII–XVIII вв. Степаноса Даштеци. Занимаясь торговлей, он бывал во многих странах и нередко вступал в беседы по разным богословским, этическим, эстетическим

³³ Նույն տեղում, էջ 99:

³⁴ Նույն տեղում:

ческим и житейским вопросам. В статье подробно изложено содержание первой из его “бесед-дискуссий” и делается вывод, что она имеет не только культурологическое значение. Ряд затронутых в ней социально-политических, экономических, историко-философских вопросов до сих пор не утратили познавательной ценности.

DIANA HAYRAPETYAN – *The Cultural Value of the First “Discussion-Debate” by Stepanos Dashtetsi.* – Ancient manuscripts are the superior possession of the Armenians. They are original sources of great importance in studying the history of Armenian culture. Among such values stand out seven “discussion-debates” by Stepanos Dashtetsi, a famous Armenian philosopher, poet, publicist, merchant of XVII-XVIII centuries. Being engaged in trading he visited many countries of the world and had discussions on different theological, philosophical, ethical, esthetic and everyday questions with various peoples. In this article the content of the first “discussion-debate” by Stepanos Dashtetsi is given more thoroughly; theological and culturological questions as well as answers given to them are illustrated in the given work. The author concludes that the mentioned "discussion-debate" has not only significant culturological value and importance, but also it includes many socio-political, economical, historical-philosophical, logical issues, that still have topmost cognitive value and significance.